ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

<03> օգոստոսի 2017թ. N 397-Հ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 29-ի N 759-Ն որոշման հավելվածի 5-րդ կետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել գնումների համակարգողի որակավորման շնորհման քննություն կազմակերպող և անցկացնող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):
2. Հաստատել՝
1) Հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի
2) Հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն հավելված N 2-ի
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Վ. ԱՐԱՄՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի

օգոստոսի 3-ի N 397-Ա հրամանի

ԿԱԶՄ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ

Արթուր Բաղդասարյան	-	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնումների գործընթացի համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ)
Հեղինե Ջաղինյան	-	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի հանրային ֆինանսների կառավարման մեթոդաբանության վարչության գնումների գործընթացի կարգավորման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ)
Ինեսա Քոչարյան	-	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական գնումների գործընթացի համակարգման վարչության գնումների գործընթացի համակարգման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ - քարտուղար)

Հավելված N 2
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
օգոստոսի 3-ի N 397-Ա հրամանի

ԿԱՐԳ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են գնումների համակարգողի որակավորման շնորհման քննություն կազմակերպող և անցկացնող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության հետ կապված հարաբերությունները:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

2. Գնումների համակարգողի որակավորման շնորհման քննության կազմակերպումն ու անցկացումը հանձնաժողովն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. Հունիսի 29-ի N 759-Ն որոշմամբ հաստատված «Գնումների համակարգողների որակավորման շնորհման և նրանց շարունակական մասնագիտական վերապատրաստման» կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանված պայմաններով, ինչպես նաև սույն կարգով:

3. Հանձնաժողովի նախագահն իրականացնում է ընթացիկ հսկողություն հանձնաժողովի գործունեության նկատմամբ և հանձնաժողովի մյուս անդամների հետ ստորագրում Կարգի 16-րդ և 18-րդ կետերով նախատեսված արձանագրությունները:

4. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն, իսկ քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի այլ անդամ՝ նախագահի հանձնարարությամբ:

5. Հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի բացակայության դեպքում քննությունը հետաձգվում է, և մինչև հաջորդող աշխատանքային օրը տեղեկագրում տեղեկատվություն է հրապարակվում քննության անցկացման նոր ժամկետի մասին, որը չի կարող լինել ուշ, քան տեղեկատվությունը հրապարակվելուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: